

Ս 91
2911

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տեր-Վարդանյան Ժենյա Վազգենի

ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱԼԵԶՈՒ ԼՍԱՐԱՆՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

ԱՆՈՎ. ԱՄՊ

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգոր Կարապետի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Աղվանի Ոսկանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հունիսի 2-ին, ժամը 12⁰⁰-ին Խ. Արուվանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Արուվանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի ապրիլի 21-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ *Տ. Ա.* Թերեզա Յուրիի Ազատյան



11-29-11

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Ժամանակակից աշխարհում գլոբալացման շարունակական միտումները, կապի և հաղորդակցության միջոցների սրընթաց զարգացումն ավելի ու ավելի է մեծացնում անգլերեն լեզվի պահանջարկը՝ որպես միջազգային հաղորդակցման միջոց: Ներկայումս հնարավոր չէ պատկերացնել որևէ երկրի տնտեսության զարգացում առանց ներքին և արտաքին գործարար կապերի ապահովման, որի լեզուն հիմնականում անգլերենն է: Միջլեզվամշակութային գործարար բանակցություններում այն գերիշխող դիրք է գրավում և շարունակում է լայնորեն կիրառվել որպես միջազգային հաղորդակցության լեզու:

Միջանձնային, մասնագիտական, միջմշակութային և այլ մակարդակներում հաղորդակցվելիս գործարարները կարող են մասնագիտական բնագրեր անգլերեն լեզվով, ներկայացնում դրանց հիմնական գաղափարները, կազմակերպում գործարար հանդիպումներ, բանակցություններ և հարցազրույցներ վարում: Ուստի գործարար անգլերենի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է զարգացնել սովորողների լեզվի տիրապետման գրագիտության մակարդակը, համակարգչային գրագիտությունը, գործարարության ոլորտում հաղորդակցական խնդիրներ լուծելու հմտությունները, ժամանակակից տեխնոլոգիաներին արագ արձագանքելու ճկունությունը, հարմարվողականությունը, ինչպես նաև ցկյանս ուսումնառությունը:

Նշված տեսանկյունից կարևորվում է հայալեզու ուսանողների գործարար հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման ու զարգացման հիմնախնդիրը: Արդյունավետ գործարար հաղորդակցություն ապահովելու համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել գործարար հաղորդակցական կոմպետենցիան ուսուցման տարրեր փուլերում:

Բարձրագույն կրթական հաստատություններում գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների արդյունավետ զարգացումը ժամանակակից օտար լեզուների մեթոդիկայի, լեզվադիդակտիկայի առավել հրատապ խնդիրներից մեկն է:

ՀՀ-ում գործարար անգլերենի ուսուցման տարրեր հայեցակերպերին են անդրադարձել մի շարք հետազոտողներ: Հ. Հովհաննիսյանը բացահայտել է գործարար անգլերենի ուսուցման գործաբանական ասպեկտը (2013), Կ. Մխիթարյանը ներկայացրել է գործարար-պաշտոնական ոճի ձևավորման հիմնական գործոնները և անդրադարձել է գովազդների օգտագործմանը գործարար անգլերենի դասընթացում (2010), Ի. Կ. Կարապետյանը ներկայացրել է գովազդների և

հակազուգահեռների ընտրության, ինչպես նաև կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում (2010): 2. Վարդապետյանն անդրադարձել է անգլերեն գործարար նամակների բառապաշարի ուսուցմանը վարժությունների միջոցով (2014), Ս. Գրիգորյանը ներկայացրել է գործարար խոսույթը որպես գերատեսչական խոսույթի տեսակ (2017), ինչպես նաև անդրադարձել գործարար հաղորդակցության էությանը (2018):

Առանձնանում են այն աշխատանքները, որոնք նվիրված են գործարար անգլերենի դասընթացում սովորողների պահանջմունքների վերլուծությանը (Zhang 2013, Mognhede & Woldemariam 2015, Guiyu & Yang 2016), ուսումնական ծրագրերի մշակմանը (Zhang & Wang 2011, Li 2014b, Chunling 2017), թարգմանության միջոցով գործարար անգլերենի ուսուցմանը (Leonardi 2009), գործարար հաղորդակցությանը (Overton 2007, Bennie 2009, Hartley & Chatterton 2015, Jeyaraj 2018) և այլն:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ-ում բարձրագույն կրթական հաստատություններում գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման անհրաժեշտությամբ:

Սույն հետազոտության նպատակն է մշակել գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունները զարգացնող մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով «Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառություն» (CLIL-Content and Language Integrated Learning) նորարարական մոտեցման առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտը գործարար անգլերենի ուսուցման գործընթացն է ՀՀ-ում:

Հետազոտության առարկան գործարար անգլերենի ուսուցման հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համակարգն է:

Հետազոտության նպատակին, օբյեկտին, առարկային համապատասխան առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

1. ուսումնասիրել գործարար անգլերենի ուսուցմանը վերաբերող հայտնի տեսություններն ու մոտեցումները,
2. վերլուծել գործարար անգլերենի դասագրքերը, դրանց բովանդակությունը, գործարար կարողությունները զարգացնող առաջադրանքները, բացահայտել գործարար տեքստերի, բառապաշարի առանձնահատկությունները,
3. վերլուծել ուսանողների հեռանկարային, մասնագիտական պահանջմունքները գործարար անգլերենի դասընթացում,

4. ստեղծել գործարար անգլերենի ուսուցման օրինակելի մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով «Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառություն» (CLIL) նորարարական մոտեցման առանձնահատկությունները,

5. փորձարարական ուսուցման ընթացքում հիմնավորել մշակված ազդեցության արդյունավետությունը:

Հետազոտության վարկածը

Եթե ուսումնասիրվեն գործարար անգլերենի ուսուցման առանձնահատկությունները՝ հիմնվելով CLIL կրթական մոտեցման վրա, ընտրվեն և մշակվեն հաղորդակցական կարողությունները զարգացնող առաջադրանքներ՝ հաշվի առնելով հայալեզու ապագա գործարարների մասնագիտական պահանջմունքները, ուսումնառության դրդապատճառները, օտար լեզու սովորելու մանկավարժական պայմանները, և հստակեցվեն հաղորդակցական կարողությունները զարգացնող ուղիներն ու ընթացակարգերը, ապա կարելի է ավելի արդյունավետ դարձնել գործարար անգլերենի ուսուցման գործընթացը, ինչպես նաև զարգացնել սովորողների գործարար անգլերենի հաղորդակցական կարողություններն ու հմտությունները:

Հետազոտության ընթացքում առաջադիր խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետևյալ **մեթոդները՝**

1. **տեսական հետազոտության մեթոդներ.** հետազոտության հիմնախնդրին առնչվող համապատասխան մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
2. **էմպիրիկ հետազոտության մեթոդներ.**
 - մշտադիտարկում (մոնիթորինգ) համապատասխան մասնագիտական բաժնում,
 - թեստավորում (դիագնոստիկ, ստուգիչ). գործարար անգլերենի դասընթացում ուսանողների պահանջմունքների և գործարար հաղորդակցական կարողությունների գնահատում,
 - փորձարարական ուսուցում,
3. **վիճակագրական հետազոտության մեթոդներ.** թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը.

1. իրականացվել է համեմատական վերլուծություն Գրանադա համալսարանի (այսուհետ՝ ԳՀ) «Տնտեսագիտություն և բիզնես» ֆակուլտետում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՏՀ) «Կառավարման», «Հաշվապահական հաշվառման և աուդիտի», «Ֆինանսական» ֆակուլտետների ուսանողների

պահանջմունքների վերլուծության արդյունքների տվյալների միջև, որոնք հիմք կծառայեն արդյունավետ մեթոդիկայի ընտրության, հաղորդակցական կարողությունները զարգացնող համապատասխան վարժությունների և առաջադրանքների ընտրության և մշակման համար,

2. ստեղծվել է գործարար անգլերենի ուսուցման գործընթացում հաղորդակցական կարողությունների զարգացման արդյունավետ մեթոդական համակարգ և հիմնավորվել վերջինիս արդյունավետությունը,

3. հստակեցվել են այն կարողությունները, որոնց ձևավորումն ու զարգացումը պարտադիր պայման են համարվում լիարժեք գործարար հաղորդակցություն ապահովելու համար,

4. գործարար անգլերենի փորձարարական ուսուցումը կազմակերպվել է՝ հաշվի առնելով CLIL կրթական մոտեցման առանձնահատկություններն ու բնորոշ գծերը հայալեզու լսարանում,

5. ստեղծված մեթոդական համակարգը կարող է նպաստել ոչ միայն սովորողների լեզվական կարողությունների ամրապնդմանը, այլև վերլուծական հմտությունների, ստեղծագործարար և քննադատարար մտածելու, տեղեկատվություն փոխանցելու, ստանալու և մշակելու, գործարար թեմաներով տարբեր հիմնախնդիրներ ներկայացնելու կարողությունների, ինչպես նաև միջմշակութային գործարար հաղորդակցության ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը

Ուսումնասիրվել են գործարար անգլերենի ուսուցման ժամանակակից ռազմավարությունները Գերմանիայի և Իտալիայի համալսարաններում և տեսությունների տեսանկյունից, ստեղծվել է մասնագիտական-հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգ, որտեղ առաջին պլան են մղվում ճանաչողական և վերճանաչողական ռազմավարությունները: Ինդրո առարկայի տեսանկյունից դասակարգվել են մասնագիտական բնագրերի և բառապաշարի ընտրության սկզբունքներն ու չափանիշները: Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից ուսումնասիրվել են գործարար անգլերենի դասագրքեր, հստակեցվել են գործարար դասագրքերի ընտրության չափանիշները, բացահայտվել են գործարար խոսույթի ուսուցման առանձնահատկությունները:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության մեջ ներկայացված սկզբունքներն ու չափանիշները կարող են հիմք ծառայել գործարար անգլերենի արդյունավետ դասագրքեր ընտրելու, համապատասխան ուսումնական նյութեր և մասնագիտական տեքստեր ընտրելու և մշակելու, ինչպես նաև գործարար անգլերենի

դասընթացում մասնագիտական բառապաշար ներմուծելու համար: Մշակված գործարար հաղորդակցական կարողությունները զարգացնող առաջադրանքների կիրառումը կարող է նպաստել գործարար անգլերենի դասընթացների արդյունավետության բարձրացմանը:

Պաշտպանության ներկայացվող դրույթները՝

1. Գործարար տեքստերն ուսուցողական նպատակներով ընտրելիս հաշվի են առնվում լեզվակիրների մասնագիտական-հաղորդակցական վարքագիծը՝ ելակետ ընդունելով «գործարարություն» գերհասկացության իմաստային-զուգորդական դաշտը:

2. Գործարար հաղորդակցական կարողությունների զարգացումը գործարար անգլերենի ուսուցման հիմնաքարն է: Լիարժեք գործարար հաղորդակցում ապահովելու համար կարևորվում է սովորողների մասնագիտական-հաղորդակցական կարողությունների ձևավորմանը նպաստող համապատասխան վարժությունների և առաջադրանքների կիրառումը՝ հիմնված CLIL կրթական չափորոշիչների վրա:

3. Ուսուցողական նպատակներով գործարար տեքստեր ընտրելիս հաշվի են առնվում, թե որ սովորողների համար է նախատեսված տվյալ ուսումնական նյութը, ուսանողների լեզվական մակարդակը, թիրախային պահանջմունքները, տարիքն ու մշակութային նախադրյալները, ազգամշակութային նշույթավորում ունեցող գործարար բառապաշարի առանձնահատկությունները, ինչպես նաև տարաբնույթ դարձվածքային միավորները:

4. CLIL կրթական մոտեցման վրա հիմնված առաջադրանքների կիրառումը գործարար անգլերենի դասընթացում հնարավորություն է տալիս մեկ ուսումնական առարկայի ընթացքում զարգացնել սովորողների գործարար մասնագիտական-հաղորդակցական կարողությունները, ինչպես նաև բարելավել անգլերեն լեզվի իմացության մակարդակը՝ զարգացնելով վերճանաչողական կարողությունները:

Հետազոտության հիմնական փուլերը՝

Առաջին փուլ (2014-2015թթ.). Մանկավարժական, լեզվաբանական, մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն: Հետազոտության առաջադիր խնդիրների հստակեցում և կոնկրետացում:

Երկրորդ փուլ (2016-2017թթ.). Հետազոտության վարկածը հաստատող գիտափորձի անցկացում, արդյունքների վերլուծություն և ամփոփում: Ստուգողական գիտափորձի փաստագրական բազային

նախնական մշակում: Հետազոտության փորձարարական հիմքի նախապատրաստում:

Երրորդ փուլ (2017-2020թթ). Փորձարարական ուսուցման անցկացում, հետազոտության արդյունքների ամփոփում, ստացված արդյունքների վերլուծություն և արդյունքների շարադրում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում է կիրառված հիմնադրույթներով, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական առանձնահատկություններին համապատասխան մեթոդների համալիր գործածությամբ և հետազոտության արդյունքում ստացված տվյալների օբյեկտիվ վերլուծությամբ:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Իսպանիայի Գրանադա համալսարանի «Տնտեսագիտություն և բիզնես» ֆակուլտետում (60 ուսանող), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (64 ուսանող) «Կառավարման» (20 ուսանող), «Հաշվապահական հաշվառման և աուդիտի» (20 ուսանող), «Ֆինանսական» (24 ուսանող) ֆակուլտետների երկրորդ կուրսերում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը՝

«Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը հայալեզու լսարանում» վերնագրով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 150 համակարգչային էջ է:

Տպագրված աշխատանքները: Ատենախոսության թեմայով տպագրված են 6 գիտական աշխատանք, որոնց ցուցակը բերված է սեղմագրի վերջում:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի («Գործարար անգլերենը մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում») առաջին «Մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման նպատակն ու խնդիրները» ենթագլխում ներկայացվում է մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման նպատակն ու խնդիրները: Զուգահեռներ են անցկացվում

«Ընդհանուր անգլերենի» և «Մասնագիտական կողմնորոշման անգլերենի» (ESP) դասընթացների միջև, բացահայտվում նմանություններն ու տարբերությունները:

Երկրորդ՝ «Գործարար անգլերենի ուսուցման առարկան, նպատակն ու խնդիրները» խորագիրը կրող ենթագլխում ներկայացվում են գործարար անգլերենի ուսուցման առարկան, նպատակն ու խնդիրները, իրականացվել է ընդհանուր անգլերենի և գործարար անգլերենի, ինչպես նաև «Անգլերենը ընդհանուր գործարար նպատակների համար»/English for General Business Purposes և «Անգլերենը հատուկ գործարար նպատակների համար»/English for Specific Business Purposes դասընթացների զուգադրական վերլուծություն: Համապատասխան գործարար դասագրքերի բովանդակության վերլուծությամբ ներկայացվում են գործարար անգլերենի դասագրքերի ընտրության չափանիշները, ուսուցողական նպատակներով գործարար նյութերն ընտրելու և գնահատելու սկզբունքները: Շեշտադրվում է ուսանողների պահանջմունքների վերլուծության դերը գործարար անգլերենի դասընթացում:

Երրորդ՝ «Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառության» հիմնախնդիրը գործարար անգլերենի դասընթացում» ենթագլխում քննության է առնվում «Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառության» (CLIL-Content and Language Integrated Learning) հիմնախնդիրը գործարար անգլերենի դասընթացում, CLIL կրթական մոտեցումը, դրա արդյունավետ ներդրումը գործարար անգլերենի դասընթացում:

Երկրորդ գլխի («Գործարար անգլերենի լեզվանյութի ուսուցման հիմնախնդիրն արդի փուլում») առաջին «Մասնագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները գործարար անգլերենում» ենթագլխում ներկայացվում են մասնագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները գործարար անգլերենի ուսուցման գործընթացում:

Երկրորդ՝ «Մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները գործարար անգլերենի դասընթացում» ենթագլխում ներկայացվում են մասնագիտական բնագրերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրները գործարար անգլերենի դասընթացում:

Երրորդ՝ «Գործարար խոսույթի ուսուցման հիմնական մոտեցումները» խորագիրը կրող ենթագլխում ներկայացվում են գործարար խոսույթի ուսուցման հիմնական մոտեցումները, գործարար խոսույթի համակարգատեղծ չափանիշները և անգլերենի գործարար խոսույթում միավորվող 4 դարձվածաբանական-իմաստային դաշտերը:

Ենթազվիսում սահմանվում է «խոսույթ», «տնտեսական խոսույթ», «գործարար խոսույթ» հասկացությունները, քննության են առնվում խոսույթի տեսակները, բացահայտվում են «սահմանակարգային գործարար խոսույթի» գործառական բնույթագրերը, վերլուծվում են գործարարական խոսույթի 3 տեսակը՝ մասնագիտական, ակադեմիական և հրապարակային:

Երրորդ՝ «**Գործարար անզվերենի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը**» խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթազվիսից: Առաջին՝ «**Հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես գործարար անզվերենի ուսուցման հիմնական նպատակ**» ենթազվիսում սահմանվում է «Հաղորդակցական կոմպետենցիա» հասկացությունը, վերլուծվում են նրա բաղադրիչները՝ լեզվական, հանրալեզվաբանական, գործաբանական կոմպետենցիաները, հստակեցվում են սովորողների ուսումնաճանաչողական կարողությունները, բացահայտվում են սովորողների կշռադատման (ոեֆլեքսիվ) գործունեության տեսակները:

Երրորդ գլխի երկրորդ՝ «**Հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեխնոլոգիաները գործարար անզվերենի դասընթացում**» ենթազվիսում, սահմանվում են գործարար հաղորդակցման հիմնական գործառույթները, դասակարգվում են գործարար անզվերենի ուսուցման գործընթացում կիրառվող ուսումնամեթոդական նյութերն ու միջոցները: Ենթազվիսում ուսումնասիրվում են լիարժեք գործարար հաղորդակցման համար անհրաժեշտ հաղորդակցական կարողությունները: Ներկայացվում են գործարար հաղորդակցական հմտությունները զարգացնող ուսումնական նյութերն ու տեխնոլոգիաները:

Երրորդ գլխի «**Գործարար անզվերենի փորձարարական ուսուցման արդյունքների ամփոփումը**» խորագիրը կրող երրորդ ենթազվիսում վերլուծվում են ուսանողների մասնագիտական, հաղորդակցական, հեռանկարային պահանջմունքները:

Վերլուծվել են հարցման արդյունքները, որն իրականացվել է Իսպանիայի ԳՀ «Տնտեսագիտություն և քիզնես» ֆակուլտետում (60 ուսանող), ՀՊՏՀ (64 ուսանող) «Կառավարման» (20 ուսանող), «Հաշվապահական հաշվառման և աուդիտի» (20 ուսանող), «Ֆինանսական» (24 ուսանող) ֆակուլտետների երկրորդ կուրսերում:

ԳՀ և ՀՊՏՀ ուսանողների պահանջմունքների վերլուծության համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՊՏՀ ուսանողները սովորում են անզվերեն հիմնականում մասնագիտության/աշխատանքի (29%) և արտասահմանում սովորելու (22%), իսկ ԳՀ ուսանողները՝ արտասահմանում սովորելու (38%) և ճամփորդելու (33%) համար: Ինչպես

վերլուծության արդյունքներն են վկայում, ԳՀ ուսանողների կեսից ավելին (58%) մտադրված չէ գտնելու անզվերենի իմացություն պահանջող աշխատանք, քանզի Իսպանիայում հիմնական աշխատանքային լեզուն համարվում է հենց իսպաներենը: Մինչդեռ ՀՊՏՀ ուսանողների գրեթե մեծամասնությունը (73%) հակված է գտնելու անզվերենի իմացություն պահանջող աշխատանք, քանզի նրանց կարծիքով (89%) անզվերենի իմացությունը կարևոր է աշխատանք գտնելու համար համալսարանն ավարտելուց հետո:

Հետազոտության ընթացքում գործարար հաղորդակցում ապահովող կարողություններից առանձնացվում են կողմնորոշիչ, տեղեկատվական-վերլուծական, կանխատեսման, բանավիճային, տեսողական-ներկայացուցչական, ստեղծագործական և անհատական/հոգեբանական կարողությունները, որոնք ստուգելու համար փորձարարական ուսուցման սկզբում սովորողները կատարել են մի շարք առաջադրանքներ, այդ թվում, **դերախաղ**՝ ընտրելով որևէ գործարար իրադրություն:

Տեղեկատվական-վերլուծական և բանավիճային կարողությունների գնահատումը ցույց տվեց, որ ուսանողների գրեթե մեծամասնությունը (93%) կարողանում է փոխանակել, ստուգել և հաստատել գործարարության ոլորտին առնչվող կոնկրետ փաստային տեղեկատվություն, արտահայտել իրենց կարծիքը քննարկման ժամանակ և շարունակել գրույցը: Սակայն պաշտոնական համատեքստում սովորողների զգալի մասը (73%) դժվարությամբ է հետևում գործարարության ոլորտին առնչվող խնդիրների քննարկմանը, ոչ լիարժեք կերպով է ներկայացնում և պաշտպանում տեսակետները:

Ուսանողների միջմշակութային կոմպետենցիայի մակարդակը գնահատելու համար կազմվել է 22 հարցից բաղկացած հարցաթերթիկ, որի առաջին 8 հարցը վերաբերում են քիզնես էթիկետին, իսկ մյուս հարցերն առնչվում են դանիացի հոգեբան Գ. Հոֆշտեդեի կողմից առաջարկված մշակութային հայեցակերպերին, որոնք ներկայացնում են մշակութային վերլուծության ընդունելի համակարգ, և վերջին 40 տարիների ընթացքում դրանք կիրառվել են ավելի քան 70 երկրում:

Աղյուսակ 1

Use the following scale for your answers. Choose *true*, *false* or *I don't know*.

	True	False	I don't know
Canadians value closeness and friendliness. It is appropriate to stand close to a business contact and frequently touch his/her arm while talking.	45%	19%	36%

When meeting a representative of the opposite sex, the man should wait for the woman to initiate the handshake.	19%	55%	26%
When breaking the ice with a contact at the beginning of a meeting it is appropriate to discuss such things as the weather, politics and traffic.	53%	19%	28%
In Mexico business conversations take place at a close physical distance.	39%	16%	45%
Colombians judge businessmen by the quality of their clothes and have a somewhat conservative taste.	42%	22%	36%
Columbia is a masculine society.	25%	20%	55%
In Indonesia businessmen should avoid prolonged eye contact.	45%	16%	39%
In Indonesian business meeting do not pass or receive anything with your left hand.	20%	20%	60%
In Australian business meeting strong eye contact is essential.	36%	14%	50%
Thumbs up gesture is a vulgar one for business meetings in Australia.	27%	11%	62%
One should not be surprised or offended being called by your first name in a business meeting in Australia.	36%	6%	58%
Sweden is a low-power distance culture.	25%	14%	61%
France is a high-power distance culture.	56%	8%	36%
When someone hands over their business card, take it with both hands, look at it carefully and make notes on it.	36%	9%	55%

Սովորողների միջմշակության կոմպետենցիայի մակարդակի գնահատման արդյունքները ամփոփելով SWOT վերլուծության միջոցով ներկայացվում են ՀՊՏՈՆՈՆՆԵՐԻ՝

- **ուժեղ կողմերը.** երկրորդ կուրսի ուսանողները տեղյակ են գործարար էթիկայի հիմնական տարրերին՝ ողջույնի ձևերին (97%), զանգեր կատարելուն (97%),

- **թույլ կողմերը.** սովորողները բավարար տեղեկատվություն չունեն տարբեր երկրներում քիզնես վարելու սովորությունների մասին՝ ռեստորանային էթիկայի կանոնների (72%), էլեկտրոնային գործարար

նամակներին պատասխանելու ընդունված ժամանակահատվածի (72%), անվանաքարտերը հագուստի ճիշտ կողմում ամրացնելու (77%), գործարար հանդիպումների ընթացքում ստացված նվերի համար շնորհակալություն հայտնելու կանոնների (93%), օտարազգի գործարարների միջև եղած հաղորդակցական հեռավորության ընդունված նորմերի (61%), հանդիպումների ընթացքում քննարկման ենթակա թեմաների (81%), պաշտոնական հագուստ կրելու (58%), ղեկավար-աշխատակից հավասարության (61%), ղեկավար-աշխատակից ստորադասություն (44%), գործարարների աչքերին նայելու անհրաժեշտության (55%), ժեստեր (73%) կիրառելու կանոնների մասին,

- **հնարավորությունները.** տարբեր մշակույթներին առնչվող գործարար թեմաների ուսումնառությունը հնարավորություն կտա ձևավորել մշակութային տարաբնույթ նորմերի իմացության կոմպետենցիա և դրանց նկատմամբ հարգանք,

- **սպառնալիքները.** գործարարության ոլորտում միջմշակութային անհրազելիվածությունը կարող է առաջացնել թյուրըմբռնում և անհանդուրժողականություն:

Հիմնվելով ստացված արդյունքների վրա՝ ՀՊՏՈՆ-ում իրականացվել է փորձարարական ուսուցում, որը տևել է մեկ կիսամյակ: Փորձարարական ուսուցման նախնական փուլում գործարար հաղորդակցական կարողություններ ձևավորող և զարգացնող վարժություններն ու առաջադրանքներն ընտրվել և մշակվել են ընկալողական և արտադրողական կարողությունները ձևավորող և զարգացնող համատեքստում:

Փորձարարական ուսուցման ընթացքում ուսանողների հեռանկարային գործարար կարողությունները, ինչպես նաև մեր կողմից մշակված կողմնորոշիչ, տեղեկատվական-վերլուծական, կանխատեսման, բանավիճային, տեսողական-ներկայացուցչական, ստեղծագործական, անհատական/հոգեբանական կարողությունները զարգացնելու համար կիրառվել են բազմաթիվ առաջադրանքներ՝ գործարար իրավիճակների մոդելավորում, դերախաղեր, դերախաղային ներկայացումներ, գծագրային նյութեր, բնագրային նյութեր, տեսանյութեր, նախագծեր, դեպքի ուսումնասիրություն, նմանակում, բանավեճ: Այս առաջադրանքների օգնությամբ ուսանողներին նախապատրաստել ենք ամփոփիչ առաջադրանքի արդյունավետ ներկայացմանը:


Ամփոփիչ առաջադրանքի հիմքում շեշտը դրվել է գործարարության ոլորտում լեզվական և ոչ լեզվական հաղորդակցության, ինչպես նաև փոխներգործում և միջմշակութային հաղորդակցության վրա:

Վերլուծության արդյունքների ամփոփումը հնարավորություն է ընձեռում հետևություն անել, որ CLIL կրթական մոտեցման հիմնական չափանիշների հիման վրա ձևավորված առաջադրանքները բարելավում են ուսումնառությունը:

CLIL կրթական մոտեցման հիմնական չափանիշների վերլուծության արդյունքում հետևություն է արվում, որ ձևավորված առաջադրանքները բարելավել են լեզվի ուսումնառությունը (94%), խթանել են սովորողների ստեղծագործականությունն ու քննադատական մտածողությունը (97%), խթանել են վերլուծական և ինքնավարության կարողությունների զարգացումը (98%), խրախուսել են ուսանողներին դառնալ ավելի իրազեկված (100%) և վերահսկել սեփական ուսումնառության գործընթացը (98%):

Կարևորվում են ուսանողների կարծիքները դերախաղային ներկայացումների վերաբերյալ: Ըստ նրանց՝ դերախաղն ու մասնագիտական սցենարները պրակտիկ են (100%), բնագրային են (98%), խրախուսող են (95%), օգտակար են ինքնավստահություն ձևավորելու համար (97%) և հանդիսանում են արդյունավետ միջոց գործարար անգլերենի ուսումնառության համար (98%):

Տրամագիր 1



Առանձնակի ուսումնասիրության առարկա է դառնում գծագրային նյութերի կիրառումը: Ուսանողները կարծում են, որ գծագրային նյութերն օգնում են սերտել մտքերն ու խոսույթը գծագրերի տրամաբանական և հաջորդական մոտեցման շնորհիվ (95%), հնարավորություն են տալիս կենտրոնանալ հաղորդվող տեղեկատվության վրա (89%), զարգացնում են սովորողների խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական կարողությունները (53%), գործարար անգլերենի բառապաշարը և մասնագիտական առարկայի բովանդակությունը (33%), խթանում են

տեսալսողական ուսումնական նյութերի կիրառումը (14%), ներառում են միջմշակութային թեմաներ (97%) և նպաստում են ժեստեր օգտագործելուն (85%):

Ըստ այդմ, եզրահանգում է արվում, որ CLIL մեթոդաբանությունն իսկապես ունի մասնագիտական զարգացման ներուժ: Մշակված առաջադրանքների շնորհիվ ուսանողների մոտ ձևավորվում են վերլուծական ընթերցանության, ստեղծագործարար և քննադատարար մտածելու, տեղեկատվություն փոխանցելու, ստանալու և մշակելու, գործարար թեմաներով տարբեր հիմնախնդիրներ ներկայացնելու կարողություններ:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Գործարար հաղորդակցումը համարվում է ներգործության հաջողության պայմաններից մեկը սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական ոլորտներում: Արդյունավետ գործարար հաղորդակցման համար առանձնացվում են կողմնորոշիչ, տեղեկատվական-վերլուծական, կանխատեսման, քանակիճային, տեսողական-ներկայացուցչական, ստեղծագործական և անհատական/հոգեբանական հաղորդակցական կարողությունները:
2. Ուսանողների հեռանկարային պահանջմունքների վերլուծության արդյունքում լիարժեք գործարար հաղորդակցման կարողություններից բացի հստակեցվել են նաև կոնֆլիկտային իրադրությունների ճիշտ գնահատման, գործարարության ոլորտում տեղեկատվության փոխանցման, գործարար փաստաթղթերի հետ աշխատելու, գործարար հաղորդակցական գործունեության տեսակների պլանավորման, գործարար վարքի դրսևորման, գործարար հաղորդակցման մեջ պրոբլեմային իրավիճակների հաղթահարման հմտությունները:
3. Գործարար անգլերենի դասընթացում «Մասնագիտական առարկայի և լեզվի ինտեգրված ուսումնառություն» (CLIL-Content and Language Integrated Learning) նորարարական մոտեցման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված մեթոդական համակարգի՝ գործարար իրավիճակների մոդելավորման, դերախաղերի, դերախաղային ներկայացումների, գծագրային նյութերի, գծագրական դասակարգիչների, բնագրային նյութերի, տեսանյութերի, նախագծերի, դեպքի ուսումնասիրության,

նմանակման, բանավեճի կիրառումը նպաստում է մասնագիտական-հաղորդակցական կոմպետենցիայի զարգացմանը:

4. CLIL կրթական մոտեցումը նպաստում է սովորողների լեզվական, ընկալողական և վերարտադրողական կարողությունների զարգացմանը, մասնագիտական բառապաշարն արդյունավետ կերպով յուրացնելուն, ուսանողների խոսքի սահունության զարգացմանը, ինչպես նաև մասնագիտական առարկան ավելի լավ յուրացնելուն, լիարժեք գործարար հաղորդակցական կարողությունների և իհարկե մշակութային տարաբնույթ նորմերի կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը:
5. CLIL կրթական մոտեցման չափանիշներով առաջնորդվելը հնարավորություն տվեց ձևավորել և զարգացնել սովորողների վերլուծական ընթերցանության, ստեղծագործարար և քննադատաբար մտածելու, տեղեկատվություն փոխանցելու, ստանալու և մշակելու, ինչպես նաև գործարար թեմաներով տարբեր հիմնախնդիրներ ներկայացնելու կարողությունները: CLIL կրթական մոտեցման չափանիշների հաշվառումը հնարավորություն է տալիս խթանել սովորողների հաղորդակցական, ինչպես նաև մասնագիտական-հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Տեր-Վարդանյան ժ., Գործարար անգլերենի դասագրքերի ընտրության սկզբունքներն ու չափանիշները, Բանբեր ԵՊԼՀ Լեզվաբանություն և բանասիրություն, 1 (44), Եր., 2018ա, էջ 652-658:

2. Տեր-Վարդանյան ժ., Ուսանողների պահանջմունքների վերլուծությունը գործարար անգլերենի դասընթացում, Բանբեր ԵՊԼՀ Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2 (43), Եր., 2018բ, էջ 221-227:

3. Տեր-Վարդանյան ժ., Ինտեգրված ուսուցման հիմնախնդիրը գործարար անգլերենի դասընթացում, Բանբեր ԵՊԼՀ Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2 (43), Եր., 2018գ, էջ 228-235:

4. Ter-Vardanyan Z., Intercultural Communicative Competence as a Key Component of Business English. Banber: Linguistics and Philology 1(44), Armenia, Yerevan, 2018, 659 p.

5. Տեր-Վարդանյան ժ., Գործարար անգլերենի հաղորդակցական կարողությունների զարգացման միջոցները, ԵՊԼՀ Բանբեր, մանկավարժական և հասարակական գիտությունների, Եր., 2 (39), 2017, էջ 130-136:

6. Տեր-Վարդանյան ժ., Անգլերեն բնագրային նյութերի կիրառումը ինտերակտիվ առաջադրանքների կատարման գործընթացում, Բանբեր, Բանասիրություն, Լեզվաբանություն, Եր., 2016, 446-456 էջ:

ЖЕНЯ ВАЗГЕНОВНА ТЕР-ВАРДАНЯН

**МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА РАЗВИТИЯ
КОММУНИКАТИВНЫХ УМЕНИЙ ДЕЛОВОГО АНГЛИЙСКОГО
ЯЗЫКА В АРМЯНОЯЗЫЧНОЙ АУДИТОРИИ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02. «Методика преподавания и обучения» (английский язык). Защита диссертации состоится 2-ого июня 2022г., в 12⁰⁰ ч. на заседании специализированного совета по педагогике 020 «Педагогика» ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Актуальность исследования обусловлена необходимостью создания методической системы развития коммуникативных умений и навыков делового английского языка в высших учебных заведениях Республики Армения.

Цель исследования: Разработка методической системы развития коммуникативных навыков и умений делового английского языка с учетом

специфики инновационного предметно-языкового, интегрированного обучения (CLIL-Content and Language Integrated Learning).

Объектом исследования является процесс изучения делового английского языка в Армении.

Предметом исследования является методическая система развития коммуникативных умений обучения деловому английскому языку.

В соответствии с целью, объектом и предметом исследования были выдвинуты следующие задачи:

1. Изучить популярные теории и подходы к обучению деловому английскому языку;
2. Проанализировать учебники делового английского языка, их содержание, задания на развитие деловых умений и навыков, выявить особенности деловых текстов, лексики;
3. Проанализировать перспективные, профессиональные потребности студентов в деловом английском;
4. Создать образцовую методическую систему изучения делового английского языка с учетом специфики инновационного подхода CLIL-Content and Language Integrated Learning;
5. Обосновать эффективность стратегии, разработанной в ходе экспериментального обучения.

Научная новизна исследования.

1. В результате сравнительного анализа потребностей студентов факультета «Экономика и бизнес» Гранадского университета и факультетов «Менеджмент», «Бухгалтерский учет», «Финансы» Армянского государственного экономического университета была проведена классификация эффективных методов отбора и разработки соответствующих упражнений и заданий, развивающих коммуникативные умения и навыки делового английского языка.
2. Создана эффективная методическая система развития коммуникативных умений и навыков в процессе изучения делового английского и обоснована ее эффективность.

3. Уточнены умения и навыки, формирование и развитие которых является обязательным условием обеспечения полноценного делового общения.
4. Экспериментальное обучение деловому английскому языку было организовано с учетом специфики предметно-языкового, интегрированного обучения в армяноязычной аудитории.
5. Созданная методическая система может способствовать не только укреплению языковых умений и навыков учащихся, но и развитию аналитических навыков, творческого и критического мышления; передаче, получению, разработке, представлению различных вопросов, связанных с бизнесом и межкультурным деловым общением.

Теоретическая значимость исследования. Изучены современные стратегии обучения деловому английскому языку с точки зрения когнитивно-коммуникативных теорий, создана методическая система профессионально-коммуникативных умений и навыков, в которой на первый план выдвинуты когнитивные стратегии. С точки зрения развития коммуникативных умений и навыков делового английского языка были изучены учебники делового английского языка, уточнены критерии отбора бизнес-учебников, выявлены особенности обучения деловой речи. С точки зрения предмета исследования систематизированы принципы и критерии отбора профессиональной лексики.

Практическая значимость исследования. Принципы и критерии, представленные в исследовании, могут служить основой для выбора эффективных учебников делового английского языка, соответствующих учебных материалов, отбора профессиональных текстов, а также введения профессиональной лексики в курс делового английского. Стратегии, упражнения и задачи, выбранные и разработанные в ходе этого исследования, могут быть использованы в процессе изучения делового английского языка для составления, разработки и отбора пособий и учебников делового английского языка. Использование заданий, которые развивают полноценные умения и

навыки делового общения, может помочь повысить эффективность курсов делового английского.

Структура и объем работы- Диссертация объемом 150 страниц состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений.

ZHENYA VAZGEN TER-VARDANYAN

DEVELOPMENT AND APPLICATION OF METHODOLOGICAL SYSTEM FOR DEVELOPING BUSINESS ENGLISH COMMUNICATION SKILLS IN ARMENIAN CLASSROOM

Thesis for degree of candidate for pedagogical sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language). The defense of thesis will be held at 12⁰⁰ on the 2nd of June 2022, at the session of the Special Board 020 SCC (Supreme Certifying Committee) to award scientific degree at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. The topicality of the research is conditioned by the need to develop a methodological system for developing Business English communication skills in higher education institutions in the Republic of Armenia.

The **aim** of this research is to develop a methodological system for developing Business English communication skills taking into account the features of the innovative approach of Content and Language Integrated Learning.

The **object** of this research is the process of teaching Business English in Armenia. The **subject** of the research is the methodological system for developing Business English communication skills. The following **objectives** have been proposed in accordance with the purpose, object and subject of the research:

1. study popular theories and approaches to teaching Business English;

2. analyze Business English textbooks, their content, tasks for developing business communicative skills, identify features of business texts, vocabulary;
3. analyze students' professional target needs in Business English;
4. create an exemplary methodological system for teaching Business English taking into account the features of the innovative approach Content and Language Integrated Learning;
5. justify the effectiveness of the strategy developed during the experiment.

The scientific novelty of the research

- 1 A comparative analysis was carried out between the data results of students needs at the faculty of "Economics and Business" of the University of Granada and at the "Management", "Accounting", "Finance" faculties of the Armenian State University of Economics, which will serve as a basis for the selection of effective methods, elaboration and selection of appropriate exercises for communication skills.
- 2 An effective methodological system has been established for the development of communication skills in the process of teaching Business English; the effectiveness of the latter has been substantiated;
- 3 The skills have been clarified, the formation and development of which are considered mandatory for ensuring full business communication,
- 4 The experimental teaching of Business English was organized taking into account the peculiarities and characteristic features of the CLIL educational approach in the Armenian-speaking classroom;
- 5 The established methodological system can contribute not only to strengthening learners' language skills, but also to developing analytical, creative and critical thinking skills, abilities to transmit, receive and process information, present various business-related issues, as well as developing intercultural business communication.

The theoretical value of the research.

It studies modern strategies for teaching Business English from the point of view of cognitive-communicative. A methodological system of professional-communicative skills has been created, where cognitive strategies are brought to the

fore. It studies some business English textbooks from the point of view of developing Business English communication skills, the criteria for selecting business textbooks were clarified, and the peculiarities of teaching business speech were revealed. From the point of view of the subject matter, the principles and criteria for the selection of professional texts and vocabulary have been classified.

The practical value of the research. The principles and criteria presented in the research can serve as a basis for selecting effective Business English textbooks, selecting relevant teaching materials, professional texts, as well as introducing professional vocabulary in the Business English course. The strategies, exercises, and tasks selected and developed during this research can be used in the Business English teaching process to compile, develop, and select Business English textbooks. The use of the tasks that develop full business communication skills can help to increase the effectiveness of Business English courses.

The structure and volume of the research. The dissertation consists of the Introduction, three Chapters, Conclusion, References, Bibliography, Appendices.

